Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Աղնջաձորի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները, սկզբունքները տարրական դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող մենթոր՝ Աիդա Խալաթյան

Ուսուցիչուհի՝ Տաթևիկ Քոչարյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 5
ԳԼՈՒԽ 2. ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ 10
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատման միջոցով հնարավոր է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Կրթական գնահատումը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

Այսօր մեզ՝ ուսուցիչներիս՝ հատկապես դասվարներիս համար բարդ և ոչ միանշանակ իրավիճակ է ստեղծվել՝ պայմանավորված գնահատման համակարգում լուրջ և զգալի փոփոխություններով: Կրթական գործընթացի նոր մոտեցումներում, որպես սկզբունք, 1-ինից 5-րդ դասարանի 1-ին կիսամյակ միավորային կամ նիշային գնահատումը փոխարինվեց ձևավորող գնահատմամբ:

Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ: Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը կնպաստի ուսումնական ողջ գործընթացի գնահատման և որակի բարձրացմանն ու բարելավմանը

Հետազոտության նպատակն է տարրական դասավանդման շրջանակներում ուսումնասիրել և քննարկել գնահատման տեսակները, գնահատման գործիքները և սկզբունքները: Այդ նպատակների իրականացման համար աշխատանքում կարևորվել են հետևյալ նպատակային խնդիրները.

- Ուսումնասիրել գնահատման վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետները և տեսակները,
- Քննարկել տարրական դասավանդման շրջանակներում գնահատման գործիքները, ինչպես նաև սկզբունքները

- Իրականացնել հետազոտություն տարրական դասարաններում գնահատման իրականացման ձևերի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումը և գնահատումը ուղղված են սովորողների ուսուցման արդյունքի և ուսման որակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը, որը վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ է մտցնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ:

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Միշել Մոնտենը անդրադարձել է սովորողների գնահատման հիմնախնդրին: Նա առաջիներից մեկն էր, որ տեսականորեն հիմնավորեց ուսուցման մեջ սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները՝ նշելով, որ «Երեխայի հակումների աստիճանին իջնելու և դրանք ղեկավարելու ունակությունը հատուկ է միայն վեհ և ուժեղ հոգուն» և միաժամանակ հավաստելով, որ ուսումնական գործընթացում ուսուցիչը պետք է հանդես գա ուղղորդողի դերում, իսկ աշակերտը պետք է ազատ լինի ճանաչողության ասպարեզում և այդ ազատությունը չպետք է սահմանափակել երեխայի համար տեսանելի շրջանակներով: Նա որպես գնահատման մեթոդ առաջարկում էր համեմատությունը և անհրաժեշտ էր համարում երեխային սովորեցնել գնահատել և՝ իրեն, և ուրիշներիրն. «Ճանաչել դիմացինի էությունը՝ գնահատելով յուրաքանչյուրի արժեքներն ու հատկանիշները»: Այսինքն՝ Մ. Մոնտենը ուղենշեց գնահատման համակարգի կարևոր սկզբունքները[1].

- աշակերտների գիտելիքների համակողմանիությունը,
- երեխայի անձնական շահագրգռության և ակտիվության հաշվառումը նյութի ուսումնասիրման ժամանակ,
- ինքնագնահատման կարողությունների զարգացման մակարդակի հաշվառումը:

[1] Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ., «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան» ուսուցչի ձեռնարկ, Երևան 2010, էջ՝ 46:

Գնահատման սկզբունքներն են արդարությունը, օբյեկտիվությունը, հուսալիությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և այլն: Բացի նշված համակարգից կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային

Սովորողների գնահատման հիմնախնդիրը իր զարգացումն է ապրել 17-րդ դարի չեխ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկու աշխատություններում: Նա առաջին էր, որ սովորողների գիտելիքների գնահատումը կապեց կրթության բովանդակության որոշակիության և տարիքային անհատական առանձնահատկությունների հաշվառման հետ և այն համարեց կրթության համակարգի կարևորագույն բաղադրիչ, որի շնորհիվ որոշվում է երեխայի անձի զարգացման դինամիկան[2]:

Զարգացնելով Մ. Մոնտենի ու Ժ.Ժ. Ռուսոյի գաղափարները՝ մանկավարժական ախտորոշման՝ որպես ուսուցման գործընթացի որոշիչ հիմքի մասին և հիմնավորելով երեխաների հոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև անձի՝ որպես բազում ոլորտներից բաղկացած ամբողջության և մանկավարժական գործընթացի սուբյեկտի ուսումնասիրման անհրաժեշտությունը[3]:

Գնահատման առաջին համակարգը ձևավորվել է Գերմանիայում: Այն բաղկացած էր երեք բալից, որոնցից յուրաքանչյուրը նշանակում էր կարգ, որ պիտի դասել տվյալ աշակերտին՝ ըստ նրա առաջադիմության (առաջին կարգ՝ լավագույն, երկրորդը՝ միջին, երրորդը՝ վատագույն): Բալերը ցույց էին տալիս աշակերտի տեղը մյուսների համեմատ: Ժամանակի ընթացքում միջին կարգը, որին պատկանում էր աշակերտների ամենամեծ քանակը, բաժանեցին լրացուցիչ երեք դասերի, որի արդյունքում ստացվեց 5 նիշային սանդղակ, որը և ընդօրինակեցին Ռուսաստանում:

Այստեղ բալերին այլ նշանակություն տվեցին: Դրանք դադարել էին աշակերտներին կարգերը ցույց տալուց. դրանց միջոցով ձգտում էին գնահատել աշակերտների իմացությունը: Ենթադրում են, որ բալերի նկատմամբ նման մոտեցումը ստեղծել է գերմանացի մանկավարժ Բազեդովի սահմանած գնահատման 12 բալյան համակարգի ազդեցությամբ:

Գնահատումն ընդհանրապես աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության,

---

[2] Հակոբյան Ն. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, Երևան, 2010թ., էջ 42:

[3] Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ., «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան» ուսուցչի ձեռնարկ: Երևան 2010, էջ՝ 17:

ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է: Այն ուսուցման գործընթացում վերահսկողությունն իրականացնող կարևոր բաղադրիչ է,որը ապահովում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը և հանդես է գալիս որպես ուսումնադաստիարակչական գործընթացի շտկման և կարգավորման միջոց: Վերահսկողությունը ուսուցման գործընթացի պարտադիր բաղադրիչ է, որի միջոցով չափվում են աշակերտի ուսումնական գործընթացի արդյունքները: Այսինքն՝ ուսուցման յուրաքանչյուր փուլի ավարտից հետո հարկավոր է պարզել, թե ինչպիսին են սովորողների ձեռքբերումների արդյունքները, որքանով է հաջողվել լուծել խնդիրները, իրականացնել ուսումնական գործընթացը, ինչ լրացուցիչ քայլերի կարիք կա և այլն:

Գնահատման նպատակներն են՝

- ուսումնառության ընթացքում նախապես մշակված հստակ չափորոշիչների միջոցով սովորողների առաջընթացի խթանում,
- ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- ուսման որակի բարելավումը,
- ուսուցման և ուսումնառության ընթացքում ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապի ապահովում,
- անդրադարձի և վերլուծության՝ ռեֆլեքսիայի կիրառում՝ որպես գնահատման կարևոր բաղադրատարր,
- սովորողների ձեռքբերումների մակարդակի ամրագրում,
- ստուգել սովորողի գիտելիքների մակարդակը, կարողությունների ու հմտությունների տիրապետման աստիճանը:

Անդրադառնանք գնահատման հիմնական գործառույթներին, դրանք են՝

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:
2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը:
3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը:
4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:

5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:
6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:
7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:
8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:
9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը:
10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Աշակերտի համար գնահատականը խրախուսանքի միջոց է, արձանագրում է ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Եթե սովորողը դեռ չի կարողանում խնդիր լուծել, դա դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին:

Գնահատումը ուսուցչին անհրաժեշտ է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու համար:

Գնահատումը ծնողին անհրաժեշտ է երեխայի առաջընթացն արձանագրելու, դաստիարակության ձևերի շուրջ մտածելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու համար:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար անհրաժեշտ է (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու համար:

Այսպիսով, աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումն ու գնահատումը ուսումնական գործընթացի անհրաժեշտ մաս են կազմում, որը կատարելագործման կարիք է զգում, քանի որ ինչպես ցանկացած համակարգ, այնպես էլ գնահատման համակարգը ենթակա է զարգացման: Զարգացումը բերեց գնահատման ժամանակակից մեթոդների ձևավորման, որոնք ավանդական մեթոդների հետ համեմատած ունեն որոշակի տարբերություններ:

Առանց գնահատականների ուսուցման գաղափարը բազմիցս քննարկվել է մանկավարժական մամուլում և հասարակական մեծ արձագանք է գտել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Արդեն այդ ժամանակ առանձին ուսուցիչներ և ուսումնական հաստատություններ հրաժարվում էին գնահատականներից և անցնում ուսման որակի վերահսկողության ուրիշ ձևերի: Մանկավարժներից շատերը կասկածանքի տակ են դնում գնահատման ժամանակակից միավորային համակարգը, կարծիքներ են հայտնում նրա կատարելագործման կամ նույնիսկ նրա փոխման մասին[4]:

[4] Ասատրյան Զ.Ա., «Տարրական կրթության մանկավարժություն» ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու), Եր.: Տիգրան Մեծ, 2017թ., էջ՝ 2:

ԳԼՈՒԽ 2. ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին»[5] հրամանի, փոփոխվել են տարրական դասարաններում գնահատման ձևերը, հիշեցնենք նախկինում գործում էր 10 բալային գնահատման տարբերակը: Նշենք, որ հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար: Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ: Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

- թեստ կամ գրավոր այլ աշխատանք,
- բանավոր հարցում,
- բաց հարցերով քննարկում,

[5] ՀՀ ԿԳՄՍՆ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին» N 11-Ն հրաման, 24.02.2023թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760 20.09.2023թ.

- այլ:

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար: Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ այն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ: Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում: Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

- ✓ գրավոր կարճ հարցում (թեստ),
- ✓ բանավոր հարցում,
- ✓ գրավոր աշխատանք,
- ✓ գործնական (լաբորատոր) աշխատանք,
- ✓ տնային աշխատանք,
- ✓ նախագծային աշխատանք,
- ✓ քննարկում, բանավեճ և այլ:

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով: Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը: Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է

բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով: Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները: Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը.

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել.

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

Նշենք, որ բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը,

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը,

3) տեղեկատվության մտապահումը,

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը,

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան,

6) սովորողի ինքնուրույնությունը,

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

Ըստ նոր չափորոշիչների տարրական դասարաններում բնութագրող գնահատումն իրականացվում է՝

- ✓ 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին,

- ✓ տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից: Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները: Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իրականացնելով «Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները, սկզբունքները տարրական դասավանդման շրջանակներում» հետազոտական աշխատանքի թեմայի ուսումնասիրության շրջանակներում ներկայացվեց տարբեր հեղինակների մեկնաբանությունները, ինչպես նաև այս տարի արդեն իսկ փոփոխված գնահատաման համակարգը, պետք է նշեմ, որ կարևորում եմ տարրական դասարաններում սովորողների անձնային որակների կատարելագործումը, ինչպես նաև դրանց հետ տարվող աշխատանքներն առաջանային եմ համարում: Հանրակրթական ծրագրերը դպրոցում միտված են ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը, հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները 35-ն են:

Քանի որ ցանկացած դասարանում սովորում են տարբեր հմտությունների և կարողությունների աշակերտներ, ուստի կարծում եմ, որ այս չափանիշները հնարավորություն են տալիս արդար և թափանցիկ անցկացնել գնահատման գործընթացը:

Ինքս լինելով տարրական դասարանի ուսուցիչ, կարծում եմ, որ դասի գնահատումը սկսվում է դասի պլանավորումից, այն պետք է իր մեջ ներառի աշակերտի հմտությունները և կարողունակությունները, ինպես նաև ապահովի վերջնարդյունքն ու հետադարձ կապը: Ներկայացնեմ դասի պլանավորման պահանջները.

- ✓ Դասի թեման (ի՞նչ ուսուցանել)
- ✓ Դասի նպատակը (ի՞նչ ուսուցանել)
- ✓ Ակնկալվող արդյունքեր
- ✓ Գնահատում
- ✓ Ուսուցման մեթոդներ (ինչպե՞ս ուսուցանել)
- ✓ Դասի կահավորումը
- ✓ Դասի ամփոփում
- ✓ Դասի անդրադարձ:

Հավելեմ, որ դասի այսպիսի մոտեցումը հնարավորինս կապահովի առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման ապահովումը սովորողների կողմից: Ինչպես արդեն նշեցի, գնահատման գործընթացը հիմնված է սովորողի կարողունակության վրա.

- Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:
- Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:
- Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Գնահատման վերջին փոփոխությունները կարծում եմ կլինեն բավականին արդյունավետ և հնարավորություն կտա լիովին գնահատել սովորողի կարողունակությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ գնահատումը հետապնդում է հետևյալ հարցի պատասխանը. « Ի՞նչն ենք գնահատում»՝ ակնկալելով հետևյալ պատասխանը: Գնահատում ենք սովորողի՝

1.Գիտելիքը

2. Հմտությունը

3. Դիրքորոշումը

4. Արժեքը:

Ուսուցչներն առանցքային դեր ունեն սովորողների ուսումնական գործընթացում և կյանքում: Նրանք աջակցում են սովորողներին՝ հաղթահարելու համար ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները: Ուսուցչի ցանկացած օգնություն պետք է լինի չափավոր, միտում չունենա ամեն ինչ երեխայի փոխարեն անելու, այլ ընդհակառակը՝ նպաստի նրա մոտ նոր հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, դրանք նոր և տարբեր իրավիճակներում կիրառելուն՝ աստիճանաբար նվազագույնի հասցնելով աջակցությունը և խթանելով ինքնուրույնությունը:

Գնահատումը միտված է կրթության որակի բարձրացմանը, նաև խրախուսում է սովորողներին, թեպետ այդ խրախուսանքը չպետք է լինի արհեստական ու չխանգարի սովորողին էլ ավելիին ձգտելուն:

Բոլոր ժամանակներում մանկավարժ գիտնականները փորձել են որոնել թվանշաններով գնահատման ուղիներ. բալային ոչ մի համակարգ չի կարող ստույգ արտահայտել աշակերտի ուսումնական գործունեության արդյունքների չափը, խորությունը, մակարդակը: Գնահատականը երբեմն կատարում է կարգապահության ամրապնդման, ինչպես նաև պատժի գործառույթ:

Այսօր դեռևս բավարար չափով մշակված չեն սովորողների բարոյական որակների, վարքագծի, արժեհամակարգի գնահատման ձևերն ու գործիքները, որոնք դեռևս տրամաբանական ամբողջականություն ներկայացնող ավարտուն տեխնոլոգիաներ չեն, այլ միայն գնահատման առանձին եղանակների հանրագումար՝ մասնավորապես նիշային: Այսպիսով՝ երեխան դպրոցում սովորում է գնահատել ոչ միայն իր ունակությունները, կարողություններն ու գիտելիքները, այլ նաև տարբեր իրադրություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԿԳՄՍՆ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին» N 11-Ն հրաման, 24.02.2023թ.
2. Ասատրյան Զ.Ա., «Տարրական կրթության մանկավարժություն» ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու), Եր.: Տիգրան Մեծ, 2017թ.,
3. Հակոբյան Ն. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, Երևան, 2010թ.,
4. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ., «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան» ուսուցչի ձեռնարկ, Երևան 2010,
5. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760 20.09.2023թ.